ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2.4-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. մարտի 25-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.4 կետով նախատեսված **«Թիրախային երկրներում գովազդային արշավների (road show) կազմակերպում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի առցանց (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա. Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- Պատվիրել «ԷԼԻՏԱՐ» ՍՊ ընկերությանը փոփոխել վերջինիս հետ 2024 թվականի փետրվարի 9-ին կնքված թիվ 47-24 պայմանագրով հաստատված թիրախային երկրների ցանկը (համաձայն պայմանագրի հավելված 1-ի «նկարագիրը» բաժնի)՝ հաշվի առնելով

այն հանգամանքը, որ 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում զգալիորեն նվազել է Ռուսաստանից զբոսաշրջային այցելությունների քանակը (2024 թվականի հունվար-փետրվար ամիսներին Ռուսաստանից զբոսաշրջային այցելությունները կազմել են ***281,560, այն դեպքում, որ*** 2023 թվականի նույն ժամանակահատվածում այցելությունները 290,063 են՝ արձանագրելով 2.9% նվազում):

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ, պայմանավորված մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ Ռուսաստանից դեպի այլ երկրներ նոր ուղղություններով չվերթների ավելացման հիմքով Հայաստան զբոսաշրջային այցելությունների քանակի նվազեցման, անհրաժեշտություն է առաջացել «ԷԼԻՏԱՐ» ՍՊ ընկերությանը պատվիրել փոփոխել վերջինիս հետ 2024 թվականի փետրվարի 9-ին կնքված թիվ 47-24 պայմանագրով հաստատված թիրախային երկրների ցանկը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի համար զբոսաշրջության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող թիրախային երկրների ցանկում առաջինն է (պայմանավորված այցելությունների մեծ թվով՝ նույնիսկ առանց հատուկ մարքեթինգային գործողությունների, աշխարհաքաղաքական գործոնների հիման վրա)՝ զբոսաշրջային այցելությունների նվազումը այս երկրից կարող է լուրջ հետևանքներ թողնել զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացման վրա: Մասնավորապես՝ զբոսաշրջային այցելությունների նվազումը լուրջ տնտեսական վնաս կարող է հասցնել թե՛ զբոսաշրջային արդյունաբերությանն ամբողջապես, թե՛ հարակից այլ ոլորտներին: Կնվազեն նաև զբոսաշրջիկների ծախսերի հիման վրա պետական բյուջեի մուտքերը:

Ռուսաստանում ակտիվ մարքեթինգային գործողություններ սկսելուն զուգահեռ «ԷԼԻՏԱՐ» ՍՊ ընկերության հետ 2024 թվականի փետրվարի 9-ին կնքված թիվ 47-24 պայմանագրով առկա ֆինանսական միջոցների շրջանակում ներկա փուլում ստիպված ենք նվազեցնել ներուժ ունեցող /երկրորդային/ շուկաներում մարքեթինգային գործողությունները: Մասնավորապես՝ նպատակահարմար է ընթացիկ տարվա համար Հորդանանում /Ամման/ նախատեսվող գովազդային արշավը հանել օրակարգից, իսկ Ճապոնիայի երկու քաղաքներում նախատեսված գովազդային արշավը սահմանափակել միայն մեկում /Տոկիո/:

Նշվեց, որ

Անհրաժեշտ է գրություն տրամադրել «ԷԼԻՏԱՐ» ՍՊ ընկերությանը՝ վերջինիս հետ 2024 թվականի փետրվարի 9-ին կնքված թիվ 47-24 պայմանագրով հաստատված թիրախային երկրների ցանկում՝ «Հորդանան՝ Ամման»-ը փոխել «Ռուսաստան՝ Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ»-ով: Հաշվի առնելով, որ Ռուսաստանում նպատակահարմար է 2 քաղաքներում գովազդային արշավի կազմակերպում (Հորդանանում 1 քաղաք էր նախատեսված), Ճապոնիայի երկու քաղաքներում նախատեսվող գովազդային արշավները նախատեսել մեկ քաղաքի համար (Տոկիո):

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. «ԷԼԻՏԱՐ» ՍՊ ընկերությանը տրամադրել գրություն, որով ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն պատվիրակում է 2024 թվականի փետրվարի 9-ին կնքված թիվ 47-24 պայմանագրով հաստատված

թիրախային երկրների ցանկում՝ Հորդանանի Ամման քաղաքի փոխարեն գովազդային արշավ նախատեսել Ռուսաստանի Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ քաղաքներում: Հետագայում արդեն Ճապոնիայի երկու քաղաքներում նախատեսվող գովազդային արշավները նախատեսել մեկ քաղաքի համար (Տոկիո):

2. Անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան փոփոխություն «ԷԼԻՏԱՐ» ՍՊ ընկերության հետ 2024 թվականի փետրվարի 9-ին կնքված թիվ 47-24 պայմանագրում:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ա. Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____